Հաստատում եմ՝
Դպրոցի տնօրեն՝ Լ. Բաբայան

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի
Պարույր Սևակի անվան N30 հիմնական դպրոցի
2023-2024 ուստարվա ուսումնադաստիարակչական
աշխատանքների

# ՏԱՐԵԿԱՆ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Մասնագիտացված կրթական աջակցությունների
գծով տնօրենի տեղակալ
Գ. Մարտիրոսյան

# ԵԹԵ ՉԵՍ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ՔԱՅԼԵՐԴ , ԱՊԱ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՍ ՁԱԽՈՂՈՒՄԴ

Հանրակրթական դպրոցում յուրաքանչյուր ուսումնական տարին չպետք է լինի սոսկ գիտելիքների հաղորդման , հմտությունների և կարողությունների ձևավորման , դրանց գնահատման և աշակերտական մեծ համայնքի ուսման առաջադիմության հաշվառման շրջան : Հասարակության մեջ կատարվող գրեթե բոլոր իրադարձություններն ու արժանահիշատակ օրերն իրենց արձագանքն են գտնում դպրոցում ,իսկ դա կատարվում և լրացվում է արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների շնորհիվ : Անկասկած՝ աշխատանքը հստակ և արդյունավետ իրականացնելու համար ՄԿԱ գծով տնօրենի տեղակալը պետք է նախապես պլանավորի .




Կրթությունը պետք է սովորողին տա խորը և բազմակողմանի գիտելիքներ՝ միաժամանակ ապահովելով այն գիտակցումը, որ դրանք պետք է ծառայեն ինչպես անձնական բարօրությանը , այնպես էլ Ազգի և Հայրենիքի հզորացմանը:

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

| | **Պաշտոնային պարտականություններ** | **Ծանոթություն** |
|---|---|---|
| 1 | Իրականացնում է ուսումնական հաստատությունում կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված միջոցառումներ | • Կազմում է ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկալ պլան<br>• Իրականացնում է ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ պլանավորում<br>• Իրականացնում է արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներ<br>• Իրականացնում է աշխատանքներ ծնողներին կրթական գործընթացներին ներգրավելու ուղղությամբ |
| 2 | Համակարգում է մասնագիտացված կրթական աջակցության ծառայությունները | • Համակարգում է «Մասնագիտական կողմնորոշում» ակումբի աշխատանքները<br>• Համակարգում և վերահսկում է հաստատության ուսումնական խմբակների աշխատանքները<br>• Օժանդակում է ուսումնական խմբակների կիսամյակային կամ տարեկան հաշվետվությունների կազմման աշխատանքներին: |
| 3 | Համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով | • Կազմակերպում է խորհրդակցություններ, քննարկումներ, սեմինարներ, հաստատության մանկավարժական աշխատողների հետ փորձի փոխանակման, ինչպես նաև գործնական գիտելիքների, հմտությունների, ունակությունների զարգացման և դրանք ուսումնական գործընթացում արդյունավետ կիրառելու ուղղությամբ: |

| | | |
|---|---|---|
| 4 | Ղեկավարում է ուսումնական հաստատության դասղեկների գործունեությունը | • Վերահսկում է դասղեկների կողմից կազմած տարեկան պլանների մշակման գործընթացը<br>• Վերահսկում է դասղեկների կողմից կազմած տարեկան պլանների կատարողականները<br>• Իրականացնում է դասղեկական ժամերի մշտադիտարկում<br>• Ուսումնասիրում և բացահայտում է դասղեկների աշխատանքում տեղ գտած թերություններն ու |

| | | |
|---|---|---|
| | | գործնական օգնություն ցույց տալ նրանց: |
| 5 | Աջակցություն է տրամադրում սովորողներին և ծնողներին՝ ուսման մեջ, առօրյա հարաբերություններում և արտակարգ իրավիճակներում հանդիպող արգելքների ու դժվարությունների հաղթահարման գործընթացում | ● Անհատական և խմբային խորհրդատվություն է տրամադրում սովորողներին, նրանց ծնողներին՝ ուսման և դաստիարակության մեջ առկա տարատեսակ խնդիրների լուծման նպատակով:<br>● Մասնակցում է սովորողների սոցիալական հարմարման, առօրյա հարաբերություններում հանդիպող արգելքների հաղթահարման, շրջապատի հետ հաղորդակցության դժվարությունները և դրանց կանխարգելմանն ու հաղթահարմանը նպաստող աշխատանքներին |
| 6 | Մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը | ● Մասնակցում և աջակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության գործընթացին:<br>● Մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների դպրոցական մակարդակի գնահատման վերահսկողության աշխատանքներին |
| 7 | Ապահովում է հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը | ● Հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը պատշաճ կերպով ապահովելու նպատակով՝ պարբերաբար կազմակերպում է հանդիպումներ հանրակրթական ուսումնական հաստատության ծնողական և աշակերտական խորհուրդների հետ:<br>● Համագործակցում է ծնողների հետ՝ սովորողների ուսումնաճանաչողական ձեռքբերումները արձանագրելու և ուսումնական գործընթացում առկա դժվարությունները բացահայտելու նպատակով: |
| 8 | Կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը | ● Ապահովում է սովորողների մոտ նախասիրությունների և հետաքրքրությունների զարգացումը հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման միջոցով<br>● Կազմակերպում է տարաբնույթ միջոցառումներ, նպատակային էքսկուրսիաներ, հայրենագիտական ճամփորդություններ |

| | | |
|---|---|---|
| 9 | Միջոցներ է ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար | • Իրականացնում է սոցիալապես անապահով երեխաների բացահայտում և հաշվառում՝ համագործակցելով ուսումնական հաստատության բոլոր դասարանների դասվարների և դասղեկների հետ<br>• Իրականացնում է սոցիալապես անապահով և ծնողազուրկ սովորողների հաճախումներին և առաջադիմությանը օժանդակող աշխատանքներ:<br>• Իրականացնում է սոցիալապես անապահով սովորողների առողջական վիճակի ամենօրյա դիտարկում և տվյալների հաշվառում: |
| 10 | Գործնական օգնություն է ցույց տալիս ուսումնական հաստատության, նրա ստորաբաժանումների մեթոդական միավորումների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում | • Աջակցում է ուսումնական հաստատության կողմից իրականացվող բովանդակային և մեթոդամանկավարժական աշխատանքներին<br>• Խորհրդատվություններ է տրամադրում դաստիարակչական գծով մանկավարժական աշխատողներին  սովորողների համար կազմակերպված աջակցության ծառայությունների արդյունքների և խնդիրների վերաբերյալ |
| 11 | Ընդհանրացնում, միջոցներ է ձեռնարկում դաստիարակչական գծով մանկավարժական աշխատողների արդյունավետ, սահմանված կարգով երաշխավորված փորձը տարածելու համար | • Օժանդակում է դաստիարակչական գծով մանկավարժական աշխատողներին՝ սահմանված կարգով  երաշխավորված փորձը  կիրառելու և տարածելու ուղղությամբ<br>• Օժանդակում է սկսնակ  դասղեկներին և դասվարներին,  հմտությունների ու դասավանդման առաջավոր փորձի տարածման, ինչպես նաև հաղորդակցման համապատասխան միջավայրի ստեղծման գործընթացում |
| 12 | Աշխատանք է տանում սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ | • Մասնակցում է հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհուրդ) կողմից հաստատած ներքին կարգապահական, այդ թվում՝ սովորողների  վարքագծի կանոնների պահպանմանն ուղղված աշխատանքներին: |

| | | |
|---|---|---|
| 13 | Կազմակերպում է ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ | • Կազմակերպում է հայրենագիտական ճամփորդություններ պատմամշակութային վայրեր՝ սովորողների մոտ հայրենի բնության, պատմամշակութային ժառանգության արժևորման նպատակով<br>• Կազմակերպում է հայոց պատմության կարևորագույն իրադարձություններին նվիրված միջոցառումներ<br>• Ապահովում է ազգային մշակութային միջոցառումներին սովորողների ներգրավվածությունը՝ ազգային մշակութային ժառանգության պահպանման, մշակութային հաստատություններ այցելելու ավանդույթի և գեղարվեստական ճաշակի բարձրացման նպատակով |

## Թիրախային խմբեր

1. **Ղեկավարող անձնակազմ**
   - Տնօրեն
   - Ուսումնական գծով փոխտնօրեններ
2. **Մանկավարժական աշխատողներ**
   - Դասղեկներ, դասվարներ
   - Ուսուցիչներ
   - Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ/ԴԱԿ/
   - Հոգեբան
   - Ներառական կրթության բազմամասնագիտական թիմ

**Աշակերտներ**

- Աշակերտական խորհուրդ
- Անցանկալի վարք և հատուկ ուշադրության կարիք ունեցող  սովորողներ
- Առանձնակի շնորհով օժտված  սովորողներ
- Սոցիալապես անապահով  սովորողներ
- Ստեղծագործողներ

3. **Ծնողներ**
   - Ծնողական խորհուրդ
   - Ծնողական համայք

4.**Սպասարկող անձնակազմ**

- Բուժքույր
- Գրադարանավար
- Տնտեսվար

5.**Պետական և  հասարակական կառույցներ**

- Ոստիկանություն/ անչափահասների  գործերով աշխատակից/
- Հասարակական և միջազգային  տարաբնույթ կազմակերպություններ

7.**Խմբակ**

## 1. Աշխատանք մանկավարժական աշխատողների հետ

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Դաստիարակներ**<br><br>**Նպատակը՝** կազմակերպել և վերահսկել դաստիարակների գործունեությունը՝ ուղղորդելով , աջակցելով , սերտ համագործակցելով | | | | |
| 1. | Դաստիարակների աշխատանքային պլանների մշակման վերահսկում և ներկայացման հաստատում | ՄԿԱ տնօրենի տեղակալ,<br><br>դաստիարակներ | սեպտեմբեր | |
| 2. | Դաստիարակական ժամերի նպատակային , միտված պլանավորում և կատարման մշտադիտարկում | Տնօրեն,ՄԿԱ տնօրենի տեղակալ | պարբերաբար | |
| ա. | Սեմինար-խորհրդակցություններ դաստիարակների հետ հետևյալ թեմաներով<br><br>• Դաստիարակի գործառույթի հիմնախնդիրները<br>• Դաստիարակը՝ հոգեբան – վերլուծող-աջակցող<br>• Դաստիարակը՝ վստահելի հենարան ու աջակից<br>• Օրինակելի դաստիարակ դառնալու էական նախադրյալները | Տնօրեն,ՄԿԱ տնօրենի տեղակալ | պարբերաբար | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | • Մեթոդական խորհուրդներ դասղեկներին՝ գործունեության ճիշտ ու արդյունավետ կազմակերպման վերաբերյալ<br>• Փորձի փոխանակում և առանցքային իրողությունների զանազան կարևոր բարձրաձայնումներ, աջակցություն նորընտիր դասղեկներին | | | |
| բ | Դասղեկական ժամերի նպատակային իրագործումներ ներքոնշյալ թեմաներով.<br>• «Անհատը՝ հասարակության կարևորագույն օղակ »<br>• «Ես հայրենիքիս զինվորն եմ, հող հայրենյաց գիտակցումով »<br>• «Սկզբունքային վարքագծի ճիշտ նորմերի դրսևորումներ »<br>• «Կարողանալ ասել՝ «Ոչ»<br>• «Սեռական հասունացման օրինաչափությունները և ոչ միայն »<br>• «Թմրամիջոցների կործանարարազդեցությունը, կամքի ուժի կարևորությունը » | ՄԿԱ տնօրենի տեղակալ,<br>դասղեկներ | ուստարվա ընթացքում | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | • «Ապօրինի միգրացիա և երեխաների և կանանց թրաֆիքինգ»<br>• «Նպատակասլացությունը առավելագույնին հասնելու հաղթահարումներ »<br>• «Պատրա՞ստ եմ արդյոք»<br>• «Կոնֆլիկտները՝ համատեղ լուծումներիփնտրտուք»<br>• « սեփականուժերի հանդեպ վստահություն»<br>• «Առողջ հոգի առողջ մարմնում »<br>• «Արժեհամակարգի ճիշտ ընկալումներ »<br>• «Գիտության լույսի հետքերով, ինքնակրթության կարևորությունը »<br>• «Բռնություն. հոգեբանական աջակցություն»<br>• « հայտնիներիկյանքի հետքերով »<br>• «Հայրենիքը՝ սրբություն սրբոց» | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| գ. | Թեմատիկ հոլովակների, պաստառների, վահանակների պատրաստում ստեղծագործական մտքի խթանում | ՄԿԱ տնօրենի տեղակալ, դասղեկներ | ուսարվա ընթացքում | |
| դ. | Սեպտեմբերի 21<br>«**ԱՅՈ** » անկախության հետքերով արժևորում, վերլուծումներ /«Անկախության մեր բանաձևը » խորագրով համադպրոցական ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԺԱՄԵՐ | ՄԿԱ տնօրենի տեղակալ, դասղեկներ, ԴԱԿ,7-9-ՐԴ Դասարաններ | սեպտեմբեր | |
| ե. | Երաժշտության միջազգային օր<br>օրը արժևորում են երաժշտագետ և երաժշտասեր մեր սովորողները | ՄԿԱ տնօրենի տեղակալ, դասղեկներ, ԴԱԿ | հոկտեմբեր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| զ. | Ուսուցիչը՝ ոգեշնչման աղբյուր ուսուցչի դերի և կարևորություն արժևորում | ՄԿԱ տնօրենի տեղակալ,<br>աշակերտական խորհուրդ<br>դասղեկներ | հոկտեմբեր | |
| է. | Ծխախոտի դեմ պայքարի միջազգային օր | ՄԿԱ տնօրենի տեղակալ,<br>հոգեբան,<br>ոստիկան ,<br>ԴԱԿ | հոկտեմբեր | |
| ը. | Հնամենի Ղարաքիլիսա-Կիրովական-Վանաձոր /Որպեսզի սիրենք հայրենիքը, պետք է այն լավ ճանաչել/ | ՄԿԱ տնօրենի տեղակալ,<br>դասղեկներ, ԴԱԿ | հոկտեմբեր | |
| թ. | Հանդուրժողականության միջազգային օր<br>կլոր սեղան /քննարկում/ | ՄԿԱ տնօրենի տեղակալ<br>դասղեկներ,<br>հոգեբան<br>8_9 –րդ դասարաններ | հոկտեմբեր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ժ. | Ճանաչողական այց Սարդարապատ հուշահամալիր<br>«  Կյանք  Արցախին»<br>/բարոյահոգեբանական աջակցություն/ | ՄԿԱ տնօրենի տեղակալ,<br>դասղեկներ<br>7-9-րդ դասարաններ | հոկտեմբեր-նոյեմբեր | |
| Ի. | ՁԻԱՀ_ի դեմ պայքարի համաշխարհային օր սեմինար- քննարկումներ | ՄԿԱ տնօրենի տեղակալ,<br>դասղեկներ,<br>բուժքույր<br>5-րդ պոլիկլինիկայի բուժաշխատող | դեկտեմբեր | |
| 15. | Մարդկանց համընդհանուր համերաշխություն և խաղաղություն /զրույց-քննարկում միջազգային օրվան նվիրված/ | ՄԿԱ տնօրենի տեղակալ,<br>դասղեկներ,<br>աշակերտական խորհուրդ | դեկտեմբեր | |
| 16. | «Ամանորյա հրաշքիհետքերով » /<br>համադպրոցական միջոցառումներ.<br>դիմակահանդես | ՄԿԱ տնօրենի տեղակալ,<br>աշակերտական խորհուրդ<br>9-րդ դասարան | դեկտեմբեր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Ուսուցիչներ**<br>Մ/Մ ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին գործնական օգնություն ցույց տալու ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման գործում | | | | |
| 1. | Դասալսումներ՝ դասի դաստիարակչական կողմը գնահատելու նպատակով | ՄԿԱ տնօրենի տեղակալ | ըստ անհրաժեշտության | |
| 2. | Սեմինար-խորհրդակցություններ՝ նվիրված դասալսումների վերլուծությանը և եզրահանգումներին | ՄԿԱ տնօրենի տեղակալ | պարբերաբար | |
| 3. | Համատեղ նպատակային բաց դասերի կազմակերպում՝ ելնելով պահի թելադրականից | ՄԿԱ տնօրենի տեղակալ, առարկայական ուսուցիչներ | ուստարվա ընթացքում | |
| **ԴԱԿ** | | | | |
| 1. | Դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի տարեկան պլանի համատեղ կազմում և ներկայացում հաստատման | Տնօրեն, ՄԿԱ տնօրենի տեղակալ, ԴԱԿ | Սեպտեմբեր | |
| 2. | Աշակերտական խորհրդի աշխատանքների համատեղ պլանավորում | ՄԿԱ տնօրենի տեղակալ, ԴԱԿ | Սեպտեմբեր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3. | Համատեղ միջոցառումների իրականցում | ՄԿԱ տնօրենի տեղակալ, ԴԱԿ | ուստարվա ընթացքում | |
| 4. | Ուսումնական հաստատության դաստիարակչական աշխատանքների վարույթի հետ կապված տարաբնույթ հարցերի քննարկումներ, համագործակցություն | ՄԿԱ տնօրենի տեղակալ, ԴԱԿ | ուստարվա ընթացքում | |
| **2.Մասնագիտացված կրթական աջակցություն** | | | | |
| **Աշակերտական խորհուրդ**<br>**Նպատակը՝** աջակցել աշակերտական ինքնավարությանը, կուռ և համակարգված գործունեությանը | | | | |
| 1. | Աշակերտական ընդհանուր ժողովի հրավիրում | Տնօրեն/ուղերձ/ ՄԿԱ տնօրենի տեղակալ | սեպտեմբեր | |
| 2. | Ընտրական հանձնախմբի ձևավորում | ՄԿԱ տնօրենի տեղակալ,ԴԱԿ | սեպտեմբեր | |
| 3. | Դասարանական խորհուրդների ձևավորում | ՄԿԱ տնօրենի տեղակալ, դասղեկներ, ԴԱԿ | սեպտեմբեր | |
| 4. | Աշակերտական խորհրդի ձևավորում | ՄԿԱ տնօրենի տեղակալ, ԴԱԿ | սեպտեմբեր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5. | Աշակերտական խորհրդի նախագահի ընտրություն | ՄԿԱ տնօրենի տեղակալ, ընտրական հանձնախումբ, ԴԱԿ, դասղեկներ, 6-9-րդ դասարաններ | սեպտեմբեր-հոկտեմբեր | |
| 6. | Աշակերտական խորհրդի ժողովներին մասնակցություն խորհրդակցական ձայնի իրավունքով: | ՄԿԱ տնօրենի տեղակալ,5-րդ դասարանի աշակերտներ | ուսարվա ընթացքում | |
| **Սոցիալապես անապահով սովորողներ**<br><br>**Նպատակը**՝ աջակցել սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին ՝ կարևորելով հոգեբանական նուրբ գործոնը | | | | |
| 1. | Սոցիալապես անապահով սովորողների բացահայտում, հաշվառում, հիմքերի ապահովում, մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացում<br><br>ցուցակագրում և ներկայացում տնօրենի հաստատմանը | ՄԿԱ տնօրենի տեղակալ,ԴԱԿ<br>դասղեկներ, դասվարներ, գրադարանավար | սեպտեմբեր | |
| | | | | |

| Անցանկալի վարք և հատուկ ուշադրության կարիք ունեցող սովորողներ | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Անցանկալի վարք ցուցաբերող երեխաների հաշվառում | ՄԿԱ տնօրենի տեղակալ,ԴԱԿ | սեպտեմբեր-հոկտեմբեր | |
| 2. | Վերոհիշյալ վարքի դրսևորման պատճառների հանգամանալից ուսումնասիրություն, ելքերի փնտրտուք, համապատասխան աշխատանքի պլանավորում: | ՄԿԱ տնօրենի տեղակալ, հոգեբան,ԴԱԿ, դասղեկներ | ուսարվա ընթացքում | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3. | Վարքային շտկումների, հղկումների կարիք ունեցող սովորողների հետ կլոր-սեղան քննարկումների անցկացում հետևյալ թեմաներով.<br>• «Իրավախախտումների կանխարգելմանն ուղղված մանկավարժական աշխատանք»<br>• «Ընտանիքը՝ անձի ձևավորման դարբնոց»<br>• «Իրազեկում ծնողներին երեխաների իրավունքների և պարտականությունների մասին»<br>• «Ռիսկի» խմբի երեխաների հայտնաբերում, համապատասխան աշխատանք նրանց հետ՝ հաշվի առնելով բարոյահոգեբանական անհատական նկարագիրը<br>• «Խրախուսումն ու չափավոր պատիժը որպես դաստիարակչական մեթոդ ընտանիքում»<br>• « Փոխադարձ վստահությունը՝ կարևոր գործոն ընտանիքում » | ՄԿԱ տնօրենի տեղակալ,<br>ծնողական խորհուրդ,<br>ոստիկան,<br>հոգեբան, ԴԱԿ, դասղեկներ | ուսարվա ընթացքում<br>պարբերաբար | |

## 3.Աշխատանք ծնողների հետ

Նպատակը՝ համագործակցության և սովորողի ընտանիքի սերտկապի ու համագործակցության ապահովում

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Համադպրոցական ծնողական ժողովների կազմակերպում | դասղեկներ, դասվարներ ՄԿԱ տնօրենի տեղակալ, | սեպտեմբեր | |
| 2. | Ծնողական դասարանական խորհուրդների ձևավորում | ՄԿԱ տնօրենի տեղակալ, դասղեկներ դասվարներ | սեպտեմբեր | |
| 3. | Ծնողական խորհրդի ձևավորում | ՄԿԱ տնօրենի տեղակալ, դասղեկներ դասվարներ | սեպտեմբեր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4. | Համատեղ միջոցառումների կազմակերպում Ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, բռնության, ֆիզիկական, հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկման բարձրացման նպատակով իրականացնել հետևյալ կլոր-սեղան քննարկումները.<br>• «Խուսափումներ գայթակղություններից կամքի ուժի դրսևորում »<br>• «Կոնֆլիկտներ ընտանիքում »<br>• «Սեռական հասունացում »<br>• «Բռնությունը՝ չարիք» | ՄԿԱ տնօրենի տեղակալ | ուստարվա ընթացքում | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | • « Դեռահասության անհատական դրսևորումները, ըմբոստողականություն »<br>• Ընտանիքում աղջիկ է մեծանում<br>• Հոր դերը ընտանիքում<br>• Մեծահասակների դերը նոր սերնդի դաստիարակության գործում | | | |
| **4.Ղեկավարող և սպասարկող անձնակազմ**<br><br>Համագործակցել գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով | | | | |
| 1. | Աշխատանքային պլանների քննարկում և հաստատում | տնօրեն,<br>ՄԿԱ տնօրենի տեղակալ | սեպտեմբեր | |
| 2. | Ընթացիկ հանձնարարականների, մտահղացումների քննարկում, կատարում, համագործակցային աշխատանքների իրագործում | տնօրեն,<br>ՄԿԱ տնօրենի տեղակալ | ուսարվա ընթացքում | |
| **Տնտեսական գծով փոխտնօրեն** | | | | |
| 1. | Դպրոցի նյութատեխնիկական բազայի զարգացման ուղղությամբ համագործակցություն | ՄԿԱ փոխտնօրեն,<br>Տնտ. գծով փոխտնօրեն | ուսարվա ընթացքում | |

| 5.Հոգեբան | | |
|---|---|---|
| 1. | Նպաստել սովորողների բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորմանն ու պահպանմանը՝ | ուսարվա ընթացքում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ցուցաբերելով խիստ անհատական մոտեցում՝ ապահովելու համար դպրոց-սովորող- ծնող փոխհարաբերությունների ցանկալի կապը համատեղ աշխատանքի համագործակցություն | | | |
| **6.Բուժքույր** | | | | |
| 1. | Աշակերտների ամենօրյա հաշվառում.<br>ա. բացակայությունների պատճառների վերհանում<br>բ. դրանց կանխարգելման ուղղված աշխատանքների կատարում<br><br>գ.ֆիզկուլտուրա առարկայից ազատված աշակերտների ցուցակի կազմում ըստ համապատասխան բժշկական փաստաթղթերի | ՄԿԱ տնօրենի տեղակալ,<br>դասղեկ,<br><br>Տնօրեն,բուժքույր, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ | ուսարվա ընթացքում<br><br><br>սեպտեմբեր | |
| **7.Պետական և հասարակական կառույցներ** | | | | |
| **8.Հասարակական և միջազգային կազմակերպություններ** | | | | |
| 1. | Աջակցել հասարակական կամ միջազգային կազմակերպությունների կողմից դպրոցում անցկացվող միջոցառումների, դասընթացների և այլ աշխատանքների իրականացմանը | ՄԿԱ տնօրենի տեղակալ,<br>ԴԱԿ | ուսարվա ընթացքում | |

ՄԿԱ տնօրենի տեղակալ՝ Գ. Մարտիրոսյան

ԴԱԿ՝ Ռ. Բլնդոյան